Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՊՈԼՏԱՎԱ

891.71
9-97

ՊԵՏՀՐԱՏ

А. С. Пушкин

Полтава

ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 1937

891.71
П-97

Ա. Ս. Պուշկին

19 NOV 2010

Պոլտավա

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

23 JUL 2013

13163

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Аязяна

59468-66

ՆՎԻՐՈՒՄՆ

Քեզ — բայց իմ մութ մուսայի յերգը
Արդյոք հասնո՞ւմ է ականջիդ,
Արդյոք սրտիս ձգտումը, տենչը
Կհասկանա համեստ հոգիդ։
Թե պոետի այս նվիրումը,
Ինչպես յերբեմն իր սերն ել այն,
Չես ընդունի կրկին, և զուր է,
Կանցնի դեմիցդ անպատասխան։
Լսիր, սակայն, այն հնչյունները,
Յերբեմն այնքան մոտ քո հոգուն,
Խորհիր, վոր բաժանման որերը,
Իմ հեղհեղուկ բախտի գրկում,
Անապատի տրտում քո տունը,
Վերջին հնչուն խոսքերը քո
Իմ միակ դանձն ու սրբություն են
Ու միակ սերն է իմ հոգու։

ՑԵՐԴ ԱՌԱՋԻՆ

Հարուստ ու մեծ է Կոչուբեյն [1]
Ունի մարգեր նա անսահման.
Ցեվ արածում են նրբա գեր
Նրժուլգների յերամակներն
Այնտեղ ազատ, անպահապան։
Պոլտավի շուրջ ագարակներ [2]
Այգիներով շրջապատված,
Ունի անչափ նա բարիքներ,
Աղլաս, արծաթ ու մորթիներ
Ամբարներում իր փակ և բաց։
Բայց Կոչուբեյն հպարտ է, լի,
Վոչ փերփերաբաշ նրժուլգներով,
Վոչ իր վոսկով—տուրքով Ղրիմի,
Վոչ ել տոհմիկ իր գյուղերով,
Իր աղջկանով է գեղագեմ
Հրպարտանում ծեր Կոչուբեյն։ [3]

Այն ել ասենք Պոլտավայում
Մարիին չի հավասարվում
Իր թովչանքով վոչ մի աղջիկ։
Նա թարմ է քանց գարնան ծաղիկ
Բացված հրսկա կաղնու սավերում։

Կե՛վում աճող բարդու նման
Սլացիկ է նա։ Շարժ ու ձևերն—
Ասես կարապն է սահում այն
Ջրերում ջինջ ու կուսական,
Կամ յերկչոտ վիթն է սուրում վեր։
Ճերմակ է կուրծքը զերթ փերփուր։
Ու բարձրը, վեհ ճակատի շուրջ
Խոպոպը թուխպ է թուխ՝ ամրան։
Աչքերում շող կա աստղերից.
Շուրթը կարմիր վարդի նման։
Բայց վոչ միայն գեղն է գերիչ
(Խամրող ծաղիկ) մեծ համբավով
Հարգվում ջահել Մարիի մեջ.
Հայտնի յե նա ամենուր՝ մեծ
Համեստությամբ ու իր խելքով։
Գալիս են պերճ փեսացուներ
Ուկրայնայից ու Ռուսայից.
Սակայն փախչում է նա վեհեր՝
Պսակից, ինչպես կապանքներից։
Մերժում—բոլոր ուզողներին.
Բայց գեամանն ինքն է ուղարկում
Իր հարսնախոսը նրբա տուն։
Ծեր է, կրքած է տարիքով,

Ռազմով, հոգսով, աշխատանքով.
Բայց սիրտը ջերմ է և կրկին
Տիրում է սերը Մաղեպին։

Պատանի սիրտն ակնթարթում
Այրվում, հանգչում է։ Սերն հզոր
Անցնում, գալիս է նորից նոր,
Նոր կիրք է միշտ նրբան լափում.
Բայց չէ այդքան հրլու—դյուրին,
Վարկենական կրքի հրով
Չի բրոնկվում ծերի հոգին՝
Արդեն սառած տարիներով։
Բյուր կրքերի բովում ագահ՝
Համառ, դանդաղ թրծված է նա.
Բայց ուշ կրքակն էլ չի հանգչի
Մինչև վերջին կայծը կյանքի։

Այն վիթը չի փախչում քարայր՝
Լրսելով ճախրը ծանր արծվի.
Հարան է սրահում մենակ, մոլար,
Դողում՝ մինչև հարցը լուծվի։

Յեվ վրդովված ամբողջ հոգով

Գալիս է մայրն ու հուզմունքով
Բռնում է ձեռքը, խոսում դողդոջ.
«Անխիղճը, ծերը պատվուրաց։
Այս կաթդ է... Վա՛յ, դեռ չենք մեռած.
Չի գործի նա վոճիրը վո՛չ։
Նա, վոր անմեղ էր սանիկին
Պիտի լիներ ընկեր ու հայր...
Կյանքի վերջում, ո՜, խելագար,
Նրան ուզում է առնել կին»։
Մարին ցնցվեց։ Դաղաղային
Մի դալկություն տիրեց նրբան,
Ու սառն, ինչպես մեռելի դին,
Աղջիկն ընկավ ճաղի վրան։

Ուշքի չեկավ նա, բայց կրկին
Փակեց աչքերն ու տրամադին
Լրռում է դեռ։ Ծեր հայրն ու մայր
Փորձում են սիրտը ամոքել,
Վանել յերկյուղն ու վիշտը դառն
Ու մութ խոհերը փարատել...
Իզուր։ Ամբողջ այդ յերկու որ
Մերթ լուռ լալով, մերթ հեծելով,
Մերժում եր ջուր ու կերակուր,

Սովերի պես գունատ, մոլոր,
Յեվ չեր քնում։ Իսկ յերբորդ օր
Նրա սենյակը մընաց թափուր։

Վոչ-վոք գիտեր, ինչպես և յերբ
Փախավ։ Զրկնորսը այն գիշեր
Զիու դոփյուն լսեց միայն,
Կանացի շունչ, կազակի ձայն,
Իսկ առավոտ մարգի մեջ թաց,
Ութ սրմբակի հետք յերևաց։

Վոչ միայն աղվամազն այտի
Ու գանգուրներն յերիտասարդ,
Ցերբեմբն ծերն ել ճակատի
Խիստ կնճիռով, մազով արծաթ,
Գեղեցկուհո՛ւ մեջ սիրաջեր
Վառում ե կրքահուլյզ տենչեր։

Շուտով հասավ Կոչուբեյին
Որհասական այդ լուրն արնոտ։
Նա մոռացավ պատիվ, ամոթ,
Նեռվեց նա գիրկը դիվային։
Ինչ նախատինք։ Ցեվ հայր ու մայր
Զեն հասկանում այդ լուրը չար։

Այն ժամ միայն ճշմարտության
Ցերևաց դեմքը սոսկագին։
Այնժամանակ պարզվեց միայն
Զահել մեղսակցուհու հոգին։
Այն ժամ պարզվեց, ինչո՛ւ այնքան
Կազանքներից ընտանեկան
Նա խուսափում եր քրմահաճ
Գաղտնի տանջվում, հոգոց հանում,
Ուզողներին ել՝ աննըվաճ
Լրությունով պատասխանում։
Ինչու յեր նա լուռ, մըտազբաղ,
Լսում միայն ծեր հեռմանին,
Ցերբ վոր հընչում եր յերգ, ծիծաղ,
Ու փըրփըրում թասում գինին։
Ինչու նա լոկ յերգում եր այն,
Ինչ վոր Մազեպն եր հորինել,[5]
Ցերբ նա աղքատ եր, փոքր ու դեռ
Հրուչակը չեր ծանոթ նըրան,
Ինչու հոգով վոչ կանացի
Այնքան սիրում եր այրուձի,
Դափերի հունչը զոռ և կանչ
Ի փառս մալորոսական
Բուլավայի ու բունչուկի։[6]

Հարուստ, հզոր ե Կոչուբեյն։
Ունի նա շա՜տ բարեկամներ։
Պատիվն իր դեռ կըլըվանա։
Վոտի կհանի Պոլտավան նա.
Նըրա տան մեջ, հանկարծակի,
Նա, հայրական վըրեժով լի,
Զարագործին կըհանդիպե՛.
Յեվ նա կարող ե անայլայլ
Բազկով շաքփրել նըրան... Բայց այլ
Խոհեր ունի ծեր Կոչուբեյն։
Ժամանակներն եյին այն խառն,
Յերբ Ռուսյան եր հասակ առնում,
Մաքառումի մեջ առնանում,
Ինչպես Պետրոս Մեծի հանճարն։
Փառքի ուսման մեջ նա ուներ
Դաժան վարպետ. Նըրան ինչքա՜ն
Հանկարծակի արնոտ դասեր
Տըվեց շվեդն ասպետական։
Բայց փորձությյան բովերում բարկ
Ճակատագրի զարկերի տակ
Ռուսյան կոփվեց։ Այդպես ահա
Մուրճն ապակին փշրում ե, բայց
Կոփում պողպատը շիկացած։

Պատկված ունայն փառքով՝ անահ
Կառլը սահում եր դեպի մահ.
Գընում եր Մոսկվայի դեմ հին՝
Ռուս ջոկատները սըրբելով,
Ինչպես մըրրիկն ե քշում ~~շատ~~ հողն
Ու թեքում խոտը ճանապարհին։
Այն ուղիով, ուր հետք թողեց
Վոսոխը նոր և առնացի,
Յերբ անկյունով իր տարփողից
Նահանջն իր՝ այրը որհասի՞։

Կար խուլ հուզմունք Ուկրայնայում։
Վաղուց եր կայծը հուրհուրում։
Բարեկամներն արնոտ հընի
Պատրաստ եյին պատերազմի,
Անհաշտ, զոռոզ, ձգտում եյին
Քանդել կապերն արդելառիթ,
Յեվ սպասում եյին Կառլին
Հիացմունքով թեթևամիտ։
Հընչում եր Մազեպի չորս կողմ
Ապստամբ կոչը. ժամ ե, ժամ։
Բայց դեռ մնում եր ծերն զգոն՝
Պյոտրի հպատակը հնազանդ։

Առաջվա պես խոժոռ ու խիստ՝
Ուկրա՛յնան եր վարում հանգիստ—
Կարծես անմասն ու անխրոով,
Տարված անհոգ խնճուքներով։

«Գեոմանը—ծեր է նա, տրկար,
Պընդում եյին պատանիներն.—
Հանգստրրել են տարիքն յերկար
Նրբա նախկին կրբակը ջերմ։
Ինչու դոդոջ ու թույլ բազկով
Կրրում է նա դեռ բուլավան։
Պետք է հիմա ռազմով, ազգով
Թնդա՛լ դեպ ատելի Մոսկվան։
Յեթե ծերուկ Դորոշենկոն, [8]
Սամոյլովիչն յերիտասարդ, [9]
Կամ Պալեյը, [10], Գորդեյենկոն [11]
Մեզ տանեյին ճակատամարտ,
Այնժամ ոտար ձրներում այն
Կաղակներ չեյին կորչի,
Կազատվեյին գնդերն համայն [12]
Մոլորոսյան մեր հեգ յերկրի»։

Այսպես եր քաջ պատանությունն

Այրվում անզուսպ ու բորբոքվում՝
Ծարավ վտանգավոր փորձի,
Մոռանալով հայրենիքի
Դերյալ վիճակը վաղեմի,
Բոգդանի բախտավոր վեճերն
Ու սուրբ ռազմերը, դաշնագրերն
Ու փառքն իրենց քաջ պապերի։
Բայց ծերությունն զգուշ քայլում
Ու միշտ նայում է կասկածով։
Անկարելին ու կարելին
Նա չի լուծում մի հարվածով։
Ո՞վ կբսուզվի խորքերն անտակ
Սառցով պատած ովկյանոսի։
Ո՞վ սուր մտքով կբթափանցի
Նենգոտ հոգու մինչև հատակն
Որհասական։ Այնտեղ մտքեր,
Այրվող կրքի արգասիքներ,
Մընում են դեռ խոր ընկըղմած
Ու վաղեմի, գուցե, տենչեր
Հասունանում են մենակյաց։
Գուցե։ Սակայն Մազեպն ինչքան
Խարդախ է, չա՛ր է, թունալից,
Այնքան անհոգ է նա դրսից

59468.66

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՌ-Арм ССР
Ա. ԿՄ. А. МЯСНИКЯНА

Ու վարմունքով պարզ է այնքան։
Ինչպես գիտե նա տիրաբար
Կարդալ սրբերն ու գրբավել,
Վարել մոքերը անվրթար
Մարդկանց գաղտնիքը բաց անել։
Ինչպիսի կեղծ վստահությամբ,
Ինչքան անհոգ՝ խնճույքներում,
Ծերերի մոտ, ծեր շաղակրատ,
Անցած որերն է միտ բերում,
Նորերի հետ՝ ազատասեր,
Դժգոհի հետ՝ ընդդեմ կայսեր,
Զրկվածների հետ արտասվում
Ու հիմարի գտնում լեզուն։
Գուցե քըչերը միայն գիտեն,
Վոր անսասան է այդ հոգին
Յեվ անխըտիր զենքերի մեջ,
Յերբ հարկ է վնաս տալ վոսոխին.
Վոր վոչ մի հին վիրավորանք
Չի մոռացել նա իր որում,
Վոր հանցավոր իր յերազանքն
Արդեն հասնում է շատ հեռուն,
Զունի նա վոչ մի սրբությունն,
Չի կատարել նա բարությունն,

Նա չի սիրում վոչինչ, ագահ՝
Ցենչում է, վորպես ջուր, արյուն,
Ազատությունն արհամարհում,
Վոր հայրենիք ել չունի նա։

Վաղուց, գաղտնի, իր չար հոգում
Ծերն ահեղ դավ եր փայփայում։
Բայց մի հայացք վտանգավոր
Թշնամական հայացք մի խոր
Նըրան շատ լավ եր հասկանում։

«Վոչ, գիշատիչ, հանդուգն գող,—
Կոչուբեյը կրճտում է չար,—
Ցես խընայում եմ տունը քո,
Իմ աղջըկա բանտը խավար.
Դու չես խանձվի հրդեհում տապ,
Դու չես սատկի մոլեգնաթափ
Կաղակի թրով։ Վո՛չ, արնախո՛ւմ
Մոսկվյան դահիճների ձեռքում,
Արյա՛ն մեջ, փուչ չքմեղանքով,
Ցըցի վըրա, ջըղաձգանքով,
Դու կանիծես այն որն ու ժամ,
Ցերբ կնքեցիր աղջիկս իմ տանն,
Ու այն խնճույքը, ուր, իզուր,
Լըցրի յես քեզ պատվո գինին.

Յեվ այն գիշերը, ծեր ուրո՛ւր,
Յերբ դու տարար իմ աղավնին...»

Կար ժամանակ, յերբ Կոչուբեյն
Ընկեր եր Մաղեպին, յեղբայր.
Յերբ Նըրանք, աղ ու հաց վորպես,
Սըրտերն եյին բացում իրար։
Նըրանց ձիերն արյան դաշտում
Թրռչում եյին միշտ միասին.
Նըրանք հաճախ եյին խոսում
Մտերմական սիրո մասին—
Կոչուբեյին՝ գետմանը փակ
Բաց եր անում, մասամբ, հատակն
Իր ապստամբ, ազահ հոգու,
Յեվ ակնարկում ապագայի
Ընդվզումներն արնով հըղի
Յեվ դաշինքներն իր ահարկու։
Այդպես եր, Կոչուբեյն հոգով
Նրան նվիրված այն ժամանակ։
Բայց մոլեգնած դառն վոխով
Նա այժմ ունի սրտում պապակ՝
Միայն մի տենչ, նա միայն մի
Միտք է սընում որ ու գիշեր՝

Կըկործանվի կամ կըհանի
Վոխն անարգված իրա դատեր։

Բայց չարությունը ձեռներեց,
Նա թագցրել է խոր սրտում։
Անզոր վշտով գիշեր, ցերեկ
Նա դեպ շիրիմ է լոկ ձգտում։
Մաղեպի դեմ նա քեն չունի.
Աղջիկն է մեղավոր միայն։
Բայց նա աղջկան ել կընելի.
Տիրոջը թող տա պատասխան—
Իր գերդաստանն անպատվելով՝
Մոռանալով յերկինք, որենք։

Այն ինչ, արծվի սուր հայացքով,
Իր շրջանում, գիշեր ցերեկ,
Փընտռում է նա՝ կողմնակիցներ
Քաջ անկաշառ և անբերեր.
Կընոջը վողջը խոստովանեց.[13]
Վաղուց նա խոր լռության մեջ
Ահեղ նյութում է մատնության,
Յեվ կանացի վըրեժով լի,
Կինն անհամբեր, անլըռելի,

Դըրդում է գաղգաղած մարդուն։
Նա լուռ դիշեր քընի պահին,
Վորպես վոգի դիշերային,
Ներան վըրեժ է փըսփըսում
Յեվ պարսավում և արտասվում
Յեվ պահանջում յերդում անեղծ—
Յեվ Կոչուբեյն ահեղ՝ յերդվեց։

Կըշըռված է հարվածը։ Արդ՝
Իսկրայի[14] հետ է Կոչուբեյն։
Խորհում են յերկուսով. «Արդեն
Պատրաստ է վոսոխին թակարդ։
Բայց ով, արդյոք, խանդավառված
Դեպի բարիքն ընդհանրական
Զարագործի մասին գրված
Այդ մատնագիրն որհասական
Կհասցնի անվախ՝ Ներան
Պյոտրին ահեղ ու կանխակարծ»։

Կազակների մեջ Պոլտավյան,
Մերժված անբախտ այդ աղջկանից,
Սիրում եր մեկը դեռ Ներան
Սիրով անմար և անձկալից։

Նա յերեկո և առավոտ
Իր մայր գետի յեզերքի մոտ,
Կեռասենու ջըվաքի տակ,
Մարիին շատ է ըսպասել,
Տանջվել անհույս ու դառնացել,
Ու լոկ տեսքովն առել փափաք։
Անհույս սիրով է սիրել նա,
Չի ձանձրացրել առաջարկով.
Նա մերժումին չեր դիմանա։
Յերբ այցելում եյին խմբով
Փեսացուները, նա ջոկվում
Ու հեռանում եր վորբ, վըհատ։
Իսկ յերբ հանկարծ Պոլտավայում
Մարիի խաղքն յեկավ ի հայտ,
Յերբ բամբասանքը Մարիին
Ծաղրեց անգութ ու այպանեց,
Մարին այդտեղ ել պահպանեց
Ներա հանդեպ իր թովքը հին։
Բայց, յերբ, թեկուզ պատահարար,
Մեկը հիշում եր Մազեպին,
Դեղնում է նա վշտով անճառ՝
Հայացքն իջեցնելով գետին։

Ո՞վ է լուսնով, աստղերի տակ
Սուրում այսքան ուշ ժամանակ,
Այն ո՞ւմ նրժույգն է անդադար
Այդպես չափում ըստեպն անծայր։

Կազակն հյուսիս է միշտ գընում,
Կազակը չի հանգըստանում
Վոչ կաղնուտում, դաշտում լըռին,
Վոչ էլ դժվար անցման պահին։

Թուրն է փայլում ղերթ ապակին,
Պարկը ղնգում կըռան տակին,
Սուրում է ձին անգայթ հեռուն,
Բաշը կայտառ թափահարում։

Սուրհանդակին պետք կըգա փող
Կըտրիճի թուրն է հույսի շող,
Կայտառ նրժույգն էլ հույս է, կյանք,
Բայց այդ պահին գլխարկն է թանկ։
Գլխարկի տեղ պատրաստ է տալ
Ձին, փողն ու թուրն ապակեփայլ,
Բայց նա գլխարկը չի զիջի
Թեկուզ վալրագ կռվի միջին։
Ի՞նչ է—գլխարկ մի հասարակ։

Վոչ—կա այնտեղ կարված՝ նամակ,
Թուղթ հետմանի դեմ չարածին
Կոչուբեյից Պետրոս Մեծին։

Այնինչ, ամպրոպը չդադալով,
Վոչ մի բանից չսարսեալով,
Մազեպը դալն է պատրաստում։
Ցեվ լիազոր ճիզվիթը[15] նրան,
Տալով դահի խախուտ խոստում,
Հիմք է դնում խռովության։
Ներանք մըթան մեջ, յերկու գող,
Բանակցում են՝ սըրտները դող,
Դալն իրար մեջ կըշռում, կարդում,
Ունիվերսալ[16] գըրում այնքան,
Արքայի գլուխը սակարկում
Ու յերդումները վասսալական։
Պալատ մտավ խորհրդավոր
Այնորվանից ինչ վոր աղքատ,
Նրան՝ Որլիկը[17] կեղծավոր,
Դետմանների միջնորդը նենգ,
Տանում, բերում է անընկատ։
Ամեն տեղ սըրբսկում են թույն
Իր ծառաները գաղտնահած,

Բուլավինի[18] հետ՝ գաղաղած
Դոնի կազակներին դերդում,
Ու զարթեցնում այնտեղ վայրի
Կիրքը խիզախ հորդաների,
Դնեպրի շեմքից այնկողմ, այդժամ,
Ահաբեկում են կատաղի
Ամբոխը հոծ կազակների
Ընդդեմ Պյոտրի իշխանության։
Մազեպն հսկում է անդադար,
Ցերկրից—յերկիր գրում. արդեն
Հանել է նա խարդախաբար
Բախչիսարայը Մոսկվայի դեմ։
Նըրան լըսում է Վարշավում
Լեհ թագավորն, Ոչակովում,
Բերդի պատերից ներս—փաշան,
Բանակում Կառլն ու ցարն։ Անքուն,
Անխոնջ է այդ հոգին դաժան.
Նա խոկալով խոկում է հար
Դիպուկ նյութել հարվածը, խոր,
Չի թուլանում այդ կամքը չար,
Չի հանգչում կիրքը հանցավոր։

Բայց նա ինչպես ցնցվեց, դողաց,

Ցերը վոր հանկարծ գլխին շողաց
Ամպրոպն ահեղ, յերբ վոր Նըրան,
Ռուսաստանի վոսոխին այն,
Ռուս իշխաններն[19] ուղարկեցին
Թուղթը գրված Պոլտավայում
Ցեվ, փոխանակ սպառնալու,
Փաղաքշանքներ շըռայլեցին
Նըրան, իբրև անմեղ զոհին։
Պատերազմի հոգսով տարված,
Կեղծ սադրանքի դեմ վրդովված,
Ու չանսալով մատնագըրին,
Ինքը արքան եր հուդային
Մըխիթարում, տալիս խոստում
Սաստել չարիքն—արմատախիլ,
Պատժով ահեղ ու շըռնդուն։

Մազեպը, կեղծ իր վշտի մեջ,
Հըլու ձայնով ցարին դիմեց.
«Պարզ է տիրոջն ու աշխարհին,
Նա, խեղճ հետման, քըսան տարի
Ցարին անկեղծ է ծառայել
Ու բարձրացել է առավել
Նըրա անճառ վողորմությամբ...
Ո՞, չարությունն անմիտ և կույր...

Արդեն հասած շիրիմի դուռ՝
Նա միթե դավաճանության
Ուսմունքն այսոր պիտի սկսեր
Ու փառքն անբիծ նրսեմացներ։
Միթե նա չէ՞ր, վոր զայրույթով
Մերժեց ոգնել Ստանիսլավին,[20]
Պատկառանքով հավատարիմ
Մերժեց նա թագն ուկրայնական,
Ու դաշնագիր, դաղտնիք այնքան,
Պարտքին գիտակ՝ հրդեց ցարին։
Նա չէ՞ր, վոր խուլ մընաց խանի[21],
Ստամբուլյան գոռ Սուլթանի
Սադրանքներին։ Պատրաստ է նա,
Խելքով, սրրով միշտ կրգնա
Ընդդեմ ցարի վոսոխներին,
Չի խնայում լեռանդ ու կյանք,
Ցեվ հանդգնել է մի չարկամ
Ցե՞խ նետել նրան, ալևորին։
Ցեվ ո՞վ է, Իսկրան, Կոչուբեյն,
Իր ընկերները հրնագույն...»
Ցեվ արցունքով արյունախում,
Հանդգնությամբ իր սառնասիրտ,
Նրրանց համար դահիճն այդ բիրտ

Մահապատիժ է պահանջում։[22]

Ո՞ւմը պատժել... Ծերուկ դաժան։
Վորի աղջի՞կն է քո գրկում։
Բայց նա խեղդում է սառնարյուն
Սրրտի մրմունջը թմրաձայն։
Խոսում է նա. Ինչո՞ւ հիմարն
Անհավասար վեճ է սկսել։
Ինքն է գոռոզ, ըմբոստասեր,
Ինքն է սրում սակը իր համար,
Ո՞ւր է վազում խուլ աչքերով։
Ի՞նչ հիմունքով ու հույսերով։
Գուցե... Բայց սերը աղջկա
Հոր կյանքը չէ՞ փրրկի։ Պիտի
Սիրողը գեսմանին գիջի,
Թե չե արյունն ինձնից կերթա»։

Մարի՜, Մարի՜, թշվառ Մարի,
Գեղ չերկասյան աղջիկների։
Գիտե՞ս, դու քո չքնաղ ծոցում
Ինչպիսի ոձ ես սընուցում։
Այդ ի՞նչ ուժով անմեկնելի
Քեզ կախարդել է, քեզ պերել

Նրբա հոգին պիղծ ու մոլի։
Դու. ո՞ւմն ես քեզ զոհաբերել։
Այն գանգուրները ալևոր
Ցեվ կնճիռները նրբա խոր,
Փոս ու փայլուն նրբա աչքերն
Ու նենգավոր խոսքերը ջերմ՝
Քեզ համար թանգ են ամենից.
Դու մոռացար քո մորն անգամ,
Վեր դասեցիր հոր ոջախից
Աւազաստը գայթակղության։
Հրբաշալի իր աչքերով
Քեզ կախարդել է ծերն անշեջ,
Նա իր խաղաղ զրույցներով
Քընացրել է խիղճը քո մեջ.
Դու քո հայացքը շրլացած
Նրբան հառած խոնարհ ու հեզ
Փայփայում ես նրբան սրտանց—
Ցեվ հաճելի է խաղքրդ քեզ,
Դու խենթ, հպարտ հիացումով՝
Անբիծ ես համարում նրբան—
Դու պատկառանքը թոլչական
Կորցրիր անդարձ քո անկումով։

Բայց ի՞նչ է Մարիին ամոթ
Ու նախատինք, թուքն աշխարհի,
Ցերբ վոր գլուխն է զոռ ծերի
Թեքվում նրբա ծնկների մոտ,
Ցերբ մոռացած գեամանն այդպես
Կյանքի աղմուկն ու աշխատանք,
Խոհերն ահեղ ու գաղտնափակ
Բացում է աղջկան այդ հեզ։
Չի ափսոսում որերը կույս,
Միայն, մեկ-մեկ, տրտում մի հույզ
Հոգին ծածկում է ամպի պես.
Պատկերացնում է հորն ու մոր
Հուսալքված ու վշտակեզ,
Տեսնում է նա աչքում արցունք՝
Նրբանց մենակ, վորդիազուրկ
Ցերության մեջ, և նա ասես
Լսում է նրանց յերգերը կիզ։
Ո, յեթե նա տեղյակ լիներ,
Ինչ վոր գիտե Ուկրայնան վողջ
Բայց նրբանից պահված է դեռ
Գաղտնիքը այն յեղեռնագործ։

ՑԵՐԴ ՑԵՐԿՐՈՐԴ

Մաղեպան մռայլ է։ Իր հոգին
Հուզված է ժանտ յերազներով։
Մարին քնքույշ իր աչքերով
Նայում է հեզ—իր ծերուկին։
Նրբա ծնկները գրկելով՝
Զեղում է սերն իր անդադար։
Իզուր՝ Թեկուզ նրբա սիրով
Զեն փարատվում խոհերը չար։
Նա չի լսում հեզ աղջկան,
Ցած է նայում նա սառնագին,
Նրբա քնքույշ նախատինքին
Լոկ լռությունն է պատասխան։
Մարին խոցվում է, զարմանում,
Նա շնչասպառ վեր է կենում,
Խոսում ցասկոտ ու վճռական։

«Լսիր, գեռման, քեզ համար յես
Կյանքում ամեն ինչ մոռացա։
Սիրելով մի անգամ հավերժ՝
Միայն քո սերն յես ունեցա
Աչքիս առաջ։ Նրբա համար

Խորտակեցի յես բախտս վառ,
Բայց չեմ ցավում վոչինչի յես—
Հիշիր՝ յերբ այն ահեղ գիշեր
Լքռության մեջ հանձնվեցի քեզ,
Դու յերդվեցիր ինձ անհուն սեր։
Ինչո՞ւ, ուրեմն, չես սիրում։

ՄԱՂԵՊԱ.

Դու անարդար ես, սիրելիս,
Հեռու կաց խենթ ցընորքներից,
Այդ անիմաստ կասկածներում
Դու սիրտդ զուր կխորտակես.
Ո վոչ, հոգին քո բոցակեզ
Հուզում է կիրքը կույր, մոլի։
Մարի, գիտցիր, սիրում եմ քեզ
Փառքից, գահից ել ավելի։

ՄԱՐԻԱ.

Վոչ, խորամանկ ես դու դեպ ինձ։
Վաղուց եյինք մենք անբաժան։
Այսոր փախչում ես իմ սերից,
Ջանքրույթ է պատճառում քեզ այն։
Պետերի հետ ես վողջ որ դու,

Խնճույք, մեկնում—իսկ յես չըկամ,
Աղքատն ե միշտ քեզ հետ նստում
Ամբողջ գիշեր, ճիզվիթը կամ,
Ցեվ կամ մենակ ես լուսացնում։
Դիպչում ե սերըս հեղ ու վորբ
Դաժանությանըդ սառցապատ։
Խըմել ես դու կենացն ինչ վոր
Դուլ'սկայայի։ Նորույթ ե այդ։
Ո՞վ ե այդ Դուլ'սկայան։

ՄԱԶԵՊԱ.

Ցեվ դու
Խանդոտ։ Ցեվ յես, այս տարիքում,
Պիտի փնտռեմ գոռոզ վողջույնն
Ինքնահավան գեղեցկուհու։
Կարո՞ղ եմ յես ծերուկըս խիստ,
Անգործ տըղի պես հառաչել,
Ծանր կապանք առնել վոտքիս,
Ու կեղծությամբ կանանց դյութել։

ՄԱՐԻԱ.

Վոչ, բայատրիը առանց շեղման
Ցեվ պարզ, ուղիղ պատասխանիր։

ՄԱԶԵՊԱ.

Թանգ ե հանգիստդ հոգեկան,
Մարի, ուրեմն այսպես, լսիր։

Մի գործ ենք մենք նյութել վաղուց.
Մեզ մոտ յեռում ե այսոր այն։
Ժամանակներ են բարեհույս.
Ու մոտ ե ժամն ահեղ բախման։
Մենք անաղատ և առանց փառք,
Քանի ծռվենք խոնարհագին
Վարշավայի հովանու տակ
Ու Մոսկովյան ինքնակալին։
Ուկրայնային ժամ ե արդեն
Անկախ մի կայսրություն դառնալ.
Պարզում եմ յես Պետրոսի դեմ
Ազատության դրոշակըն ալ։
Պատրաստ ե վողջը, դաշնագիր
Ունեն ինձ հետ յերկու արքա.
Շուտով շըփոթ աղաղակի
Ու վեճերի մեջ մարտական
Կըբարձրանամ գուցե յես գահ։
Ցեվ հուսալի յեն ընկերներս.
Իշխանուհի Դուլ'սկայան,

Ճիզվիթն ու այս աղքատն, ահա,
Կըտանեն գործը մինչև վերջ։
Արքաներից նամակ, պատվեր
Նրանք են ինձ բերում, տանում։
Ահա քեզ մեծ խոստովանանք։
Գահն ես։ Կասկածը քո անհագ՝
Ցըրվեց արդյոք։

ՄԱՐԻԱ.

Ո, թանկագին,
Կդառնաս ցար դու աշխարհին
Քո հարազատ։ Վայել է թագն
Ալիքներիդ։

ՄԱԶԵՊԱ.

Կաց, վաղ է դեռ,
Դեռ կճայթի մըրիկը բարկ։
Ով գիտե, ինչ է սպասում մեզ։

ՄԱՐԻԱ.

Քեզ հետ չունեմ յես վոչ մի ահ—
Հըզոր ես դու։ Գիտեմ, ո՜, քեզ
Գահն է սպասում։

ՄԱԶԵՊԱ.

Իսկ յեթե մեռ...

ՄԱՐԻԱ.

Ցեռ եկ քեզ հետ դեպ մահ այնժամ։
Մի՞թե կապրեմ յես առանց քեզ։
Վոչ։ դու ունես գահի նըշան։

ՄԱԶԵՊԱ.

Սիրում ես ինձ։

ՄԱՐԻԱ.

Սիրում եմ։ Ցեռ։

ՄԱԶԵՊԱ.

Քեզ թանգ է հեյրըդ ավելի,
Թե ամուսինըդ։

ՄԱՐԻԱ.

Սիրելի,
Ի՞նչ հարց է այդ։ Դա ինձ մատնեց
Զուր տագնապի։ Ճգնում եմ հար,
Վոր մոռանամ յես հայը ու մայր։

Նրանց յես խաղք արի։ գուցե
(Զարհուրելի ինչ գառանցանք)
Ինձ անիծել է հայրը բարկ,
Ցեվ ձեմ համար։

ՄԱԶԵՊԱ.

Ցես թանգ եմ քեզ
Հոբից ուրեմը։ Լաւ ես...

ՄԱՐԻԱ.

Տէր։

ՄԱԶԵՊԱ.

Պատասխանիր։

ՄԱՐԻԱ.

Դու ինքդ ասա։

ՄԱԶԵՊԱ.

Ասենք թե բանն այնտեղ հասավ,
Վոր պիտ մեռնի կամ նա, կամ յես,
Ու դատաստանն էլ քո ձեռին,
Դու կզոհես մեզնից վորին,

Վորին հոգով կպաշտպանես։

ՄԱՐԻԱ.

Ախ բավ է, սիրտս մի հանիր։
Դու, գայթակղիչ։

ՄԱԶԵՊԱ.

Պատասխանիր։

ՄԱՐԻԱ.

Գունատ ես դու, խոսքդ դաժան...
Մի բարկանա։ Ցես ամեն բան
Պատրաստ եմ քեզ զոհել։ Սակայն
Սարսափ է միաքն այդ խոսքերի։
Հերիք է։

ՄԱԶԵՊԱ.

Բայց հիշիր, Մարի,
Ինչ ասացիր ինձ այս վայրկյան։

Լուռ է գիշերն ուկրայնական։
Յերկինքը ջինջ է։ Շողշողուն
Չի ուզում ոչն իր նինջն անգամ
Վանել։ Հազիվ է դողդողում

Բարդիների տերևն արծաթ։
Վերից լուսինը մեղմածաթ
Շողում է Բելա ցերկովին,
Պարտեզներին գետմանական
Ու վողողում դղյակը հին։
Ցեվ լուռ է, լուռ է չորս բոլոր.
Բայց դղյակում շըփոթ, հուզում։
Զնդաններից մեկում, մոլոր,
Խորունկ ու ծանրը խոկանքում,
Լուսամուտի առաջ նըստած,
Կոչուբեյը, շըղթան վոտքին,
Մըռայլ նայում է յերկընքին։

Վաղը պատիժն է։ Բայց անահ
Դիմավորում է մահվան նա։
Նա իր կյանքին չի ափսոսում։
Մահն ինչ է վոր, ցանկալի քուն։
Կերթա շիրիմ նա արնոտված։
Հաղթում է նինջը։ Տեր աստված.
Զարագործի վոտքերի տակ,
Ընկնես անզոր, բերանըդ փակ,
Ինչպես անբան մի անասուն,
Ցարն ինքն իրեն ձեռքովը քեզ՝

Տա վոխերիմ իր թշնամուն.
Վոր դու տանջվես և անարգվես,
Կորցընես կյանք, պատիվ, տնուն,
Տանես քեզ հետ կառափնասյուն
Ընկերներին, դագաղի մոտ
Լըսես նըբանց նըզովքն արնոտ,
Անմեղ պառկես կացինի տակ,
Ու տեսնես դեմըդ սանձարձակ,
Ծաղրող հայացքը թըշնամուդ,
Նետվես մահվան անդունդը մութ՝
Զավանդելով և վոչ վոքի
Վերջեժը խոր քո վոսոխի։

Ցեվ նա Պոլտավան իր հիշեց,
Ցեվ ընտանիք և բարեկամ,
Անցած որերի փառքը մեծ,
Հիշեց յերգերն իր աղջկա,
Ցեվ տունը հին, ուր նա ծնվել,
Ցեվ այն, ինչով հրճվել կյանքում
Ցեվ այժմ կամավոր թողել,
Ինչու։—
Սիրել եր ջանք ու խաղաղ քուն
Բայց բանալին ժանգոտ

Ջնդում է կողպեքում—և նա
Խորհում է սթափվելով. ահա,
Արնաշաղախ իմ ճամփի մոտ
Իմ ուղեցույցը խաչակիր,
Հզոր լուծիչը մեղքերի,
Բժիշկն հոգու վերքի, ծառան
Ի մեզ խաչված Քրիստոսի.
Նա ինձ բերում է սըրբազան
Մարմին, արյուն։ Թող ամրանամ,
Մահվան դիմեմ թող համարձակ
Ու մտնեմ այլ, անմահ մի կյանք։

Ու մորմոքով խորունկ՝ սրտի
Պատրաստ է նա, խեղճ Կոչուբեյն,
Ձեղել թախիծն իր աղերսի
Ամենազոր անհունի դեմ։
Բայց մի ճանձնի փոխարեն նա
Ուրիշ մի հյուր տեսավ հիմա.
Տեսավ նա Ո՛րլիկին մոլի։
Ցեվ դառնորեն, զվարանքով լի,
Հարցնում է նահատակը ծեր.
«Այստեղ ես դու, մարդ ժանտագին,
Ինչո՞ւ գիշերն իմ այս վերջին

Մազեպն ելի խռովում է դեռ։

ՈՐԼԻԿ

Հարցաքննում է դեռ. խոսքը։

ԿՈՉՈՒԲԵՅ

Արդեն խոսել եմ, հեռացիր,
Ինձ թող մենակ։

ՈՐԼԻԿ

Գեռմանը դեռ
Ուզում է գաղտնիքներ։

ԿՈՉՈՒԲԵՅ

Բայց ինչ։
Վաղուց ասել եմ ամեն ինչ—
Ձեր պահանջով։ Իմ ցուցմունքներն
Ամենն ել կեղծ են։ Նենգամիտ,
Դավիչ եմ յես։ Նա՝ ճշմարիտ,
Ել ինչ։

ՈՐԼԻԿ

Վաղուց է մեզ հայտնի,

Վոր դու հարուստ եյիր անհուն,
Վոր դու ունես Դիկանկայում[38]
Անթիվ գանձեր պահած գաղտնի։
Դու, անկասկած, կգլխատվես,
Քո ունեցվածքն ամբողջապես
Կանցնի գանձարկղը ռազմական—
Որենքն այդպես է։ Ցես այս ժամ,
Վերջին նըշում եմ պարտքըդ. բաց.
Ո՞ւր են գանձերըդ թաղցըրած։

ԿՈՉՈՒԲԵՑ

Ձեք սըխալված. յես այս յերկրում
Ցերեք գանձով եյի բերկրում։
Առաջին գանձը՝ պատիվս եր այն,
Վոր կտատանքներն ինձնից առան,
Ցերկրորդ իմ գանձն՝ անդարձ կորած՝
Պատիվն եր իմ դըստեր սիրած։
Նըրա համար դիշեր ցերեկ—
Դողում եյի յես սրտացավ.
Մաղեպն այդ գանձը գողացավ։
Բայց յերրորդ գանձը պահեցի,
Գանձն իմ՝ վրեժը սրբազան։
Ասըծուն եմ տանում յես այն։

ՈՐԼԻԿ

Թող զառանցանքըդ, ծերունի.
Այսոր, գեթ, թողնելով յերկիր,
Դու լրջամիտ յեղիր և խոր։
Կատակելու ժամ չե։ Խոսիր,
Ցեթե կտատանք չես ուզում նոր.
Ու՞ր են փողերը։

ԿՈՉՈՒԲԵՑ

Զար ստրուկ,
Վերջ կա արդյոք այդ անհեթեթ
Հարցերին։ Կաց, մտնեմ դագաղ,
Այնժամ գընա Մաղեպի հետ
Ձեր մատներով արնաշաղախ
Իմ ունեցվածքը հաշվելու,
Նըկուղները փորփըրելու,
Այրելու տունն, այդին խաղաղ։
Տարեք ձեզ հետ իմ աղջըկան,
Նա ինքը վողջը ձեզ կասի,
Տեղն ինքը ցույց կտա գանձի.
Այժըմ ասածու սիրուն, սակայն,
Խնդրում եմ՝ ինձ թողեք հանգիստ։

ՈՐԼԻԿ

Ու՞ր են փողերը թաղցրած։
Չէ՞ս։ Ու՞ր են քո փողերը, բաց.
Վախեցիր վատ հետեվանքից։
Խորհիր, ասա մեզ տեղը։ Ի՞նչ.
Լքռո՞ւմ ես։ Նու—կտանք։ Դահիճ։ [24]
Յեկավ դահիճը...
Ո, գիշեր
Տանջանքների։ Բայց ուր է նա։
Ու՞ր է հետմանը չարագործ։
Ու՞ր է ծածկել ոճն իր անարգ
Խըղճի խայթերը չարախոց։
Թմրադեղված սիրով նենգոտ,
Անգիտությամբ դեռ յերջանիկ
Աղջկա սրահում, յերիտասարդ
Իր սանուհու անկողնու մոտ
Նստած է լուռ, մըռայլ ու մութ
Մաղեպը խոնարհված գլխով։
Հոգով անցնում է հազար խոհ,
Մեկը մյուսից դըժնի, դըժնի,
«Խենթ Կոչուբեյ—նա կըմեռնի,
Նա փրկություն չունի։ Վորքան

Վոր նըպատակը գետմանի
Մոտ է, այնքան նա անսասան
Իշխանությամբ ոժտվի պիտի,
Այնքան իր դեմ ցած պիտ իջնի
Վոսոխը։ Վոչ մի փրկություն.
Մատնիչն ու իր ընկերն իսկույն
Պիտի մեռնեն»։ Սակայն հառած
Մաղեպը դեմքը անկողնուն՝
Խոկում է ծանրը. «Տեր աստված.
Ի՞նչ կըլինի նըրան, յերբ նա
Կըլսի լուրն որհասական։
Հանգիստ է նա մինչև այսժամ —
Սակայն դաղտնիքը չի մընա—
Յերկար պահված։ Առավոտյան
Սակրը կիջնի, կըդըդրդա
Ուկրայնան վողջ։ Ցերկիրն համայն
Կըձայնակցի շուրջը նըրա...
Տեսնում եմ, ախ. թե բախտն անհաղ
Ցըվել է քեզ կյանքի հույզեր,
Ամպրոպն, ուրեմըն, տար մենակ,
Մի ունենա դու կին ու սեր։
Ցեվ չեն լծվի նույն սայլակին
Նըժույգն ու սառսըռուն այծյամ։

Յեռ մոռացա ինձ. դառնագին
Տալիս եմ տուրքը խենթության...
Ինչ վոր թանգ եր, ինչ վոր անգին,
Ինչ վոր թովք եր տալիս կյանքին,
Բերավ ինձ խեղճն իբրև նվվեր,
Ինձ, ծերուկիս մըռայլ,—և ինչ.
Ինչ վիշտ եմ յես նրբան տըվել»։
Յեվ նա նայում է վերըստին.
Ինչ քաղցրը, մեղմ է անկողնում
Անդորրը պատանեկության։
Յեվ քունը յերջանիկ՝ նրան
Ինչքան քնքուշ է փայփայում։
Շուրթը բացվեց. խըռովք չունի
Շունչը նրա ջահել կրծքի։
Իսկ վաղը, վաղը... ցնցվելով
Մաղեպը դեմքը դարձընում,
Յելնում է լուռ ու դուրս գալիս
Ամայացած այգին իջնում։

Լուռ է գիշերն ուկրայնական,
Յերկինքը ջինջ է։ Շողշողուն։
Չի ուզում ոդն իր նինջն անգամ
Վանել։ Հաղիվ է ~~գորգոնում~~ դողդողում

Բարդիների տերևն արծաթ։
Բայց Մաղեպի հոգու մեջ ժանտ
Մութ են խոհերն ոտարոտի.
Փայլուն աստղերը յերկնքի,
Վորպես աչքեր մեղադրական
Նայում են, հեգնորեն, նըրան։
Յեվ բարդիները խիտ շարքով,
Գլուխները մեղմ որորելով,
Լուռ փըսփըսում են վորպես խոլ
Դատավորներ։ Խեղդուկ է գոլ
Ամառնային գիշերը մութ,
Ինչպես զընդան անլուսամուտ։

Յեվ... թույլ մի հիչ... Նվաղ մի հեծ
Նա, գուցե դղյակից լըսեց։
Արդյոք մըտքի ցընորք եր այդ,
Գայլանի ~~Գայլանի~~ կոծ, բուի կըռինչ,
Կատանքի հեծ, թե այլ մի հինչ—
Բայց միայն իր հուզմունքը վատ
Ծերն անկարող յեղավ վանել
Յեվ այլ գոչով պատասխանեց
Այդ նվոցին—այն գոչումով,
Վորով յերբեմըն նա գինով,

Ռազմաճակատն էր խըլացնում,
Յերբ Զաբելայի, Դամալեյի,
Նըրա հետ... այդ Կոչուբեյի—
Թըռչում էր նա ռազմի բոցում։

Ծիրանի այգը մատն ահա
Պարզեց պայծառ յերկնի վըրա։
Փայլեց բըլուր, հովիտ և արտ,
Յեվ կատարներն անտառների,
Յեվ գետն արծաթ, կոհակալից։
Հնչեց աղմուկն այգի զըվարթ
Յեվ արթնացավ մարդը քնից։

Մարին անհուշ և դեռ շընչում
Ու մեղմաթև նինջի գըրկում
Լըսում է, մեկը ներս յեկավ
Ու մեղմ դիպավ նըրա վոտքին։
Նա արթնացավ—սակայն կրկին
Փակեց աչքերը՝ ժպտալով՝
Առավոտյան լուսյի վայլից.
Մեկնեց թևերն ու շընջաց
Նա նվաղուն, գորովալից.
«Մաղթպա...»։ Բայց ուրիշ մի ձայն

Պատասխանեց... ո, տեր աստված։
Ցընցվեց Մարին... և ինչ։ Նըրան
Իր մայրն է մոտենում...

ՄԱՅՐ

Լուռ կաց.
Մեզ մի սպանի, յես գիշերով
Այստեղ անցա գաղտագողի՝
Արտասվալի լոկ մի խնդրով։
Այսոր պատիժն է։ Դու ելի
Մեղմես գուցե նըրանց մոլի
Կիրքը։ Փրկիր քո հոբը։

ԴՈՒՍՏՐ (Սարսափահար)

Ի՞նչ հայը
Յեվ ինչ պատիժ։

ՄԱՅՐ

Դու չըգիտես
Մինչ այժըմ... Վոչ, դու վանքում չես,
Այլ՝ դղյակում. տեսնում ես բիրտ
Գետմանի ույժն՝ ինչպես անսիրտ
Պատժում է իր վոսոխներին,
Ինչքան մոտիկ է նա ցարին—

Բայց յես տեսնում եմ. վըշտահար
Ծընողներիդ մերժում ես դու
Մաղեպայի սիրո համար։
Քընած ես դու, յերբ նըրանք չար
Մի դատաստան են պատրաստում,
Կարդում վըճիռը մոլեգին,
Հորըդ համար սըրում կացին—
Տեսնում եմ. խորթ ենք մենք իրար...
Մարի, աղջիկըս, մի լինի քար,
Վազիր, նըրա վոտքերն ընկիր,
Հրեշտակ յեղիր, հորըդ փրկիր,
Քո հայացքով դու կըկապես
Չարագործի ձեռքը զազիր,
Կըհեռացնես կացինը։ Վազիր,
Պահանջիր—չի մերժի նա քեզ,
Դու նրա սիրուն թողիր պատիվ,
Ծնող, աստված։

ԴՈՒՍՏՐ

Այս ՝ուր եմ յես։
Հալբըս... Մաղեպան... գլխատում—
Այստեղ, ինձ մոտ, այս դղյակում,
Մայրըս աղերսելու յեկած—

Խելագարվել եմ յես հանկարծ,
Կամ զառանցում եմ։

ՄԱՑՐ

Տեր ընդ քեզ,—
Վոչ, զառացանք, յերազ չկա.
Դու չե՞ս լըսել մինչև հիմա.
Վոր հայրըդ, մոլեգնած դըստեր
Անպատվությամբ, չըդիմացավ,
Ցեվ գետմանին մատնեց կայսեր՝
Դրդված վոխից արնածարավ.
Վոր տանջանքում արյունահեղձ,
Նա ամոթով խոստովանեց
Սադրանքն ու դավը խոլական,
Վոր զոհն արդար խիղախության
Գլխով տրված է վոսոխին.
Վոր յեթե աչն ահեղ վերին
Չառնի նըրան հովանու տակ,
Այսոր նըրան կգլխատեն
Զինվորական ժողովի դեմ.
Վոր նա նստած է դըժնդակ
Բանտի աշտարակում։

ԴՈՒՍՏՐ

Աստված,

Աստված, այսոր։—Թշվառ իմ հայր
Ցեվ նա մահճին ընկավ, մընաց,
Ինչպես մեռելը դալկահար։

Խայտաբղետում են գըզակներ։
Տեգերն արևի տակ շողում։
Թնդում են թմբուկներ, դափեր։
Թըռչում է զորքն գետմանական, 25
Հավասարվում են շարքերում
Գնդերն։ Ամբոխն է խիտ յեռում։
Սըրտերն են թրփրտում։ Ճամփան
Ոձի գալար պոչի նըման
Շարժվում է՝ լի ժողովրդով։
Դաշտի մեջ բեմն որհասական։
Այնտեղ ժըպտում է անվըրդով
Դահիճն ու սպասում զոհին.
Կամ խաղացնում է ահագին
Սակրը ձեռքով իր սպիտակ
Կամ կատակում աննըպատակ՝
Ամբոխի հետ ուրախացող։
Վողջը ձուլվեց մի շառաչող

Աղմուկի մեջ. կանացի ձիչ,
Ծիծաղ ու հեծ, հիշոց կիզիչ։
Հանկարծ հնչեց ազդու մի ձայն
Ու վողջը պապանձվեց։ Միայն
Նըժույգների դոփյունն եր գոռ
Լըսվում լըռության մեջ զարհուր։
Շըրջապատված վարձու զորքով՝
Պան գետմանն իր շըքախմբով
Քշում եր ձին իր սևաթույր։
Մինչ այնտեղից, կ,եվի ճամփով
Գալիս եր սայլը։ Տագնապով
Բոլորը նայեցին այնտեղ։
Խաղաղ, յերկնքի հետ հաշտված,
Նստած եր Կոչուբեյն անմեղ,
Կողքին, անհոգ ու լուռ, Իսկրան,
Բախտին հըլու՝ գառի նըման։
Սայլը կանգնեց։ Վորոտալիս
Աղոթքը հոգևոր հընչեց։
Բարձրացավ խունկը բուրվառից։
Ամբոխն անձայն խաչակնքեց
Թշվառների հոգու համար,
Նահատակներն ել՝ իրենց չար
Վոսոխների։ Ահա գնացին,
Յելան։ Ու խաչակնքելով

Կոչուբեյն է պառկում կոճղին,
Ցեվ լուռ է, լուռ ամբոխն ահով
Ինչպես դագաղ։ Փայլեց կացինն
Ու դեն թռավ գլուխն ահա։
Տընքաց վողջ դաշտը։ Մյուսն խկույն
Թռավ նույնպես ակընթարթում։
Արյամբ ներկվեց խոտը խաղաղ—
Ցեվ չար դահիճը հրճվանքով
Մաղափնջերը ձիգ ձեռքով
Բռնեց ու կառափները զույգ
Ամբոխի վրա ցնցեց հատուկ։

Մահապատիժը կատարվեց։
Ամբոխն անհոգ ցրվում է տուն
Ցեվ ամեն մեկն արդեն անվերջ
Իր բանն ու գործն է մրտմրտում։
Դաշտը, քիչ—քիչ, ամայացավ,
Մինչդեռ ճամփով փոշեթաթավ
Ցերկու կանայք եյին վազում,
Տանջված, փոշոտ և ուժասպառ։
Շտապում եյին գըլխատման վայր
Ներանք՝ զարհուրանքով լեցուն։
«Ել ուշ է»,—մատն այնկողմ մեկնած,

Մեկն ամբոխից ասավ նըրանց։
Այնտեղ քանդում են բեմն արնոտ
Սևազգեստ հոր աղոթքի տակ
Ու բարձրացնում են սայլի մոտ
Կաղնյա դագաղն յերկու կազակ։

Փախավ Մազեպն ահեղ, մենակ,
Առաջն ընկած հեծյալների,
Արյան դաշտից։ Մի ահռելի
Դատարկությամբ տանջվում եր նա։
Վոչ վոք նըրան մոտ չեր գալիս,
Նա չեր խոսում բոլորովին։
Փրփրած սուրում եր նըրա ձին։
«Ո՞ւր է Մարին»,—հասնելով տուն
Հարցրեց Մազեպը։ Լսում է նա
Պատասխաններ յերկչոտ, տրտում...
Ցեվ սարսափով նա ակամա
Բացում է դուռը սենյակի.
Սենյակը լուռ է և ամա—
Նա խռովահույզ նետվեց այդին.
Բայց ընդարձակ լըճակի շուրջ
Ստվերներում խաղաղաշունչ
Թափուր է, հետք իսպառ չկա—

Փախավ։—Կանչում է նա խկուլն
Իրա մարդկանց հավատարիմ,
Իր քաջարի սերդյուկներին։
Ներանք թրռան։ Ձիու փնչոց,
Հետապնդման վայրենի դոչ—
Անդուլ սուրում են քաջ տղերք
Սրբաթբռիչ՝ ամենուրեք։

Վազում են թանդ ակնթարթներ,
Յետ չի գալիս Մարիան դեռ։
Վոչ վոք գիտեր. չկար մի լուր,
Ինչու փախավ նա, և ինչպես։
Կրճատում եր ծեր Մաղեպը լուռ։
Իր ծառաները տխրատես
Ու պապանձված՝ զողում եյին։
Պահած սրտում իր՝ թուլնը կեզ՝
Մաղեպը սենյակում փակվեց։
Անկողնի մոտ, մութ սենյակում
Նստած՝ նա աչքը չեր փակում
Տանջանքներով անհերկրային։
Ձիավորներն առավոտյան
Մեկմեկ վերադառնում եյին։
Հոգնած եյին ձիերն՝ անչափ։

Սանձ, թամբակալ, սրթար, փորկապ—
Բոլորը փրփուրով պատված
Ջարդված եյին, արյունոտված։
Բայց վոչ վոք լուր բերեց Ներան
Աղջկա մասին թշվառական։
Յեվ հետքն անգամ իր գոյության
Կորավ ինչպես դատարկ հունչյուն,
Ու տարագիր մայրն եր միայն
Կարիքն ու վիշտը ճաշակում։

ՅԵՐԳ ՅԵՐՐՈՐԴ

Ձի խանգարում վիշտը խորին
Ուկրայնայի ղեկավարին՝
Հեռուն ձգտել հանդգնամետ։
Իր դիտումի մեջ աներեր,
Շարունակում է կապը դեռ
Շվեդի հպարտ արքայի հետ։
Մինչդեռ, վոր անվրեպ խաբի
Կասկածանքի աչքերը չար,
Նա կարծեցյալ տառապանքի
Անկողնի մեջ տնքում է հար,
Բժիշկներից իր անհամար

Աղերսելով առողջություն։
Վշտեր, ցավեր ու ծերություն,
Արգասիքները կրքերի,
Պատերազմի ու հոգսերի,
Մահվան դաժան կարապետներ,
Նրբան վազուց են զգետնել
Մահճին։ Ցեվ նա ունայն յերկրից
Պատրաստ է հեռանալ կարծես,
Ու կատարել սրբբազան ծես։
Հովվապետին է նա կանչում
Իր սուտ մահվան մահիճի մոտ
Ցեվ ալիքներն իրա նենգոտ
Խորհրդավոր յուղով ոծում։

Որերն անցնում եյին։ Մոսկվան
Զուր է սպասում ամեն վայրկյան
Շվեդներին՝ նյութած թագուն,
Հին թշնամի դամբաններում,
Նրբանց համար հոգեհանգիստ։
Կառլոսը դարձ մի կատարեց
Ու ռազմն Ուկրայնա փոխադրեց։

Ցեվ որն հասավ։ Մահճից վոստնեց
Մազեպն, այս տառապյալն անզոր։
Նա, վոր յերեկ դեռ՝ մահամերձ,

Շիրիմի դրան, տնքում եր խոր.
Պլոտի վոսոխն է նա այսոր։
Նա սյժըմ ժիր, գնդերի դեմ
Շողում է աչքերով վրսեմ,
Ցեվ սուր է նա ճոճում կըրկին
Ու դեպի Դեսնան քըշում ձին։
Այդպես այն կարդինալը կեղծ,
Ծրուած կյանքի ծերության տակ
Ցերբ Հրոմի խուլրով պսակվեց,
Դարձավ ջահել, հաղթահասակ։

Թրռավ համբավը թեերով,
Ուկրայնան աղմըկեց խրռով,
«Նա անց կացավ, դավաճանեց,
Կառլի վոտքերի տակ դրեց
Հրլու բունչուկը»։ Բոցափայլ
Ծագեց արնոտ ու վիթխարի
Հրդեհը ժողովրդական
Պատերազմի։

Դժվար է տալ
Զայրույթը, հուրն ահեղ ցարի[26]։
Թընդում է նզովքը տաճարում

Պատռեց դահիճը[27] Մազեպայի
Դիմապատկերն։ Ու վեճերում
Անզուսպ՝ աղմկահույզ Ռհադայի
Ուրբ մի գեռման են ընտրում։
Ցենիսեյի խոպան ափից
Կոչուբեյի և Ի՛սկրայի
Ընտանիքները վըշտալից
Պյոտրը կանչում ե իրեն քով։
Նա նըրանց հետ արցունք հեղում,
Նըրանց շոյում ե հեղեղում
Յեվ նոր պատվով և բարիքով։
Յասկոտ վոսոխը Մազեպի,
Ծերուկ Պալեյը—հեծվորն անահ,
Սուրում ե աքսորից դեպի
Ցարի բանակն—Ուկրայինա։
Լըքված ե բունտն արդեն անտեր,
Կոճղի վըրա քաջի նըման
Մեռնում ե Զեչելն[28] անվեհեր՝
Զապոռոժի քաջ ատաման։
Յեվ դու, ընտրյալըդ ռազմական
Փառքի, սաղավարտի սիրուն
Թագը թողած, որհասդ ե արդ,
Դու վերջապես տեսար հեռվում

Պոլտավայի պատերն հըպարտ։

Յեվ ցարը զորքն այնտեղ նետեց։
Անցան գնդերն ինչպես մըրրիկ—
Յերկու բանակը դաշտի մեջ
Շուրջկալ արին իրար ճարպիկ։
Խիզախ մարտում հաճախ ջարդված,
Ու կանխորոք արյամբ հարբած,
Դիպչում ե, վերջապես, կըրկին
Ահեղ մարտիկը մարտիկին.
Տեսնում ե Կառլը վըրդովված
Վոչ թե կույտերը խեղճ, ցրված,
Նարվյան փախըստականների,
Այլ գիծը գնդերի—փայլուն,
Արագընթաց, զգաստ, հըլու—
Յեվ շարքն անպարտ սըվիններով։

Բայց նա վճռել ե անսասան—
Մարտն սկսել առավոտյան։
Քընած ե խոր բանակը Շվեդ։
Վըրաններից մեկում միայն
Զգույշ խոսում են իրար հետ։

«Վոչ, յես տեսնում եմ, Որլիկդ իմ,

Շտապեցինք մենք անտեղի.
Հանդուգն ու վատ եր իմ հաշիվն
Ու վոչ մի շահ մեզ չի բերի։
Տեսնում եմ յես, կորած ե, արդ,
Իմ նըպատակը։ Ի՞նչ անել։
Վրիպումը շատ ե մեծ. յես այդ
Կառլի հանդեպ սըխալվեցի։
Տըղա յե նա քաջ, առնացի.
Հաջողությամբ, իհարկե, նա
Յերկու մարտ կ'սարքի,
Նա անվեհեր կըսլանա
Դեպի վոսոխն իր՝ ընթրիքի,[29]
Կարող ե նա նաև ռումբին
Լոկ ծիծաղով պատասխանել.[30]
Ու գիշերով թագուն անցնել,
Ռուս զինվորից էլ անխափան,
Բանակի մեջ թըշնամական.
Ինչպես այսոր՝ փըռել գետին
Կազակին քաջ ու խոր վերքին
Խորունկ վերքով տալ պատասխան,[31]—
Բայց նա չե, վոր պիտի կըռվի
Ընդդեմ հսկա ինքնակալի։
Ուզում ե բախտը, ղերթ վաշտեր,

Նա խաղացնել թըմբուկի տակ։
Նա կույր, համառ ե, անհամբեր,
Թեթևամիտ, գոռոզ ու տաք։
Աստված մեր բախտը գիտենա.
Թշնամու նոր ուժերը նա
Զափում ե իր փառքով անցած։
Նա կըփշրի յեղջյուրն անդարձ։
Ամոթ. ծեր հասակում տարվել
Այս ռազմական շրջմոլիկով,
Նրա քաջությամբ խանդավառվել,
Հարբել իր վաղանցուկ փառքով
Ձերթ ամոթխած աղջիկ։

ՈՐԼԻԿ

Կռվին

Դեռ կսպասենք։ Կարող ենք դեռ
Պետրոսի հետ խոսել կրկին.
Դեռ կարելի յե վեճն հարթել։
Կռվում մեզնից լավ չարդ կերած՝
Կըհաշտվի ցարն անկասկած։

ՄԱԶԵՊԱ

Վոչ, ուշ ե։ Ռուս թագավորին

Հընար չկա հաշտվել ինձ հետ,
Վաղուց է վրճռված հավետ
Ճակատագիրն իմ։ Շատ է հին
Իմ վոխն այրող։ Ազովի մոտ
Յես մի անգամ մինչ առավոտ
Նստած եյի խրբախճանքի
Դաժան ցարի վրանի տակ.
Փրփրում եյին գինու թասեր
Ու նրրանց հետ զրրույցը մեր։
Խոսք նետեցի յես համարձակ։
Զահել հյուրերը վախեցան—
Նա, մոլեգնած, թասը նետեց
Ու բրռնելով ծերունական
Բեխերը՝ ինձ թափահարեց։
Այնժամ զսպած զայրույթս անզոր՝
Յես ինձ տրվի վրեժի յերդում
Յեվ այն կրրում եմ մինչ այսոր,
Ինչպես վոր մայրը արգանդում
Կրրում է իր յերեխային։
Հասել է ժամն որհասային։
Նա իմ մասին հուշեր, այսպես,
Պահպանելու յե մինչև վերջ։
Նրրան պահված պատիժն եմ յես,

Փուշ եմ նրրա պսակի մեջ.
Կրտար տոհմիկ նա քաղաքներ,
Կյանքի ժամերը ցանկալի,
Վոր անցյալի նրման բռներ
Մաղեպայի բեխերն ելի։
Բայց կա դեռ հույս։ Մեր բախտը դեռ
Վաղն արշալույսը կրվրճռի»։

Լրռեց։ Փակում է իր աչքերն
Այդ դավաճանը ռուս ցարի։
Վառվեց այգի հրրդեհը նոր
Արդեն դաշտում, բլրի լանջին
Վոռնում է ռումբը։ Մուգ բոսոր
Փարվում է ծուխը յերկնքին
Առավոտյան շողերում ջինջ։
Գնդերը շարքը սեղմեցին։
Հրրաձիգներն յեկան ցրիվ
Թրփերի մեջ։ Արկը գոռում,
Սուլում են գընդակներն անթիվ
Ու պաղ սվինները՝ կառկառվում։
Հաղթանակի սրրած վորդիք,
Շվեդներն, առաջ են նետվում ձիգ
Մարտկոցների կրակի միջով.

Ալեկոծվում է այրուձին,
Հետքովն իր՝ հետևակն ըշտապ,
Ցեվ, ծանրակուռ իր ամբությամբ,
Ուժ է տալիս նրբա դրոհին։
Որհասական դաշտը մարտի
Թնդում, վառվում է բոցակեզ,
Բայց ռազմի բախտը՝ շեշտակի
Արդեն ժպտալ է սկսում մեզ։
Գումարտակները, յետ նետված
Համազարկով ու շրփոթված,
Ընկնում են անդադար, ցրվում,
Ոռզենն է նահանջում նեղված,
Ու Շլեպենբախն անձնատրվում։
Շվեդին նեղում ենք մարտ առ մարտ,
Խամրում է դրոշն նրա հին փառքով,
Յուրաքանչյուր մեր քայլը, արդ,
Սրբրագործում է արնազարդ
Ռազմի աստվածն իր կընիքով։

Այնժամ վերից վոգեշընչված՝
Կանչում է Պյոտրը թնդալից.
«Դեպ գործը, տեր ընդմեզ»։ Վրանից,
Մոտիկներով շրջապատված,

Յելնում է նա։ Աչքերը վառ
Ցոլում են։ Դեմքն է սարսելի։
Արագ են շարժումներն անահ։
Նա գեղեցիկ է, սքանչելի,
Աստվածային ամպրոպն է նա։
Ցեկավ։ Նրբան նրժույգ տրվին։
Հանդարտ է նժույգը ժիր, յեռուն։
Զգալով հուրն որհասային՝
Դողաց։ Նա շեղ նայեց հեռուն
Ու թռավ ռազմի փոշում խրոով—
Հրպարտ՝ հրզոր իր հեծյալով։

Արդեն կեսոր է։ Տոթ է կեզ
Հանգչում է ռազմն հնձվորի պես։
Այնտեղ սուրում է մի կաղակ։
Գնդերն այստեղ մրտնում են շարք։
Լրռեց մուզիկը մարտական։
Բլուրների վրրա, կարկամ,
Լրռեց մի պահ թնդանոթի
Մռունչը գոռ և անոթի։
Թնդացնելով դաշտն անսահման՝
Հեռվում ուռա վորոտացին.
Տեսան գնդերը Պետրոսին։

Գնդերի դեմ սուրում է նա՝
Հրպարտ ու յերկանիկ, զերթ մարտ։
Աչքով լափում է դաշտերն՝ անահ։
Իր յետևից անցան անպարտ
Պյոտրի ճուտերը քաջարի—
Բախտախաղում այս աշխարհի,
Ռազմի գործում, պետության մեջ,
Նրբա վորդիքն ու ընկերներ՝
Շերեմեթևն ազնվական,
Յեվ Բրյուսը, Բոուրը, Ռեպնին,
Նաև բախտի այն սիրելին,
Իշխանավորն ու կիսարքան։

Յեվ վիրավոր, դունատ, լռին,
Պատգարակում, հավատարիմ
Ծառաների ուսին բազմած,
Իր մարտական ջոկատների
Կապույտ տողանցների դիմաց
Յերևաց Կառլը։ Հերոսի
Զորավարներն իր հետ եկին։
Թաղված եր նա խոհերում խոր։
Շրփոթ հայացքը անսովոր
Մի խրոովմունք եր գրծագրում։

Ցանկալի մարտն ասես Կառլին
Տարակուսանք եր պատճառում...
Յեվ նա ձեռքի թույլ շարժումով
Առաջ վարեց գընդերն իրա,
Շարժեց առաջ ռուսների վրա։
Նրանց հետ գնդերը ցարական
Ծլխում, դաշտում, իրար յեկան։
Թընդաց Պոլտավյան մարտն ահեղ։
Հրի մեջ, թեժ կարկտի տակ,
Վորպես կենդանի ամբարտակ,
Նոր շարքն ընկնող շարքերի տեղ
Սեղմում է ավին։ Վորպես ամպրոպ՝
Հեծյալ գընդերը քառատրոպ,
Սուսեր, սանձեր զնգացնելով,
Բաղխվում, հնձվում են խոլ թափով։
Ռումբերը չուգունե չորս կողմ
Պայթում, ցըրում, փորում են հողն
Ու կլտելով դիերն անվերջ՝
Թռչում արյան լըճերի մեջ։
Շվեդ, ռուս, խոցում է խոր, թրատում,
Թրմբուկ է, կանչ է կըռճըտյուն,
Վորոտը թնդանոթների,
Ձիու դոփյուն, խրխինջ, անքոց,

Ամեն կողմ մահ, դրժոխք ու բոց։

Տագնապներում այդ խոլ, խբռով,
Ներշնչումի հայացքներով,
Զորավարները սառնագին
Նայում են ճակատամարտին,
Մարտաշարժերն անդուլ դիտում,
Կռահում կորուստ ու հաղթություն
Ցեվ իրար հետ խոսում կամաց։
Բայց ռուսական արքայի մոտ
Ո՞վ է ռազմիկն այն տարիքոտ։
Ցերկու կազակներին հենված,
Բորբոքվելով սրտով կըրքոտ,
Նա հերոսի վարժ աչքերով
Դիտում է ռազմը մեծախռով։
Այլևըս չի նստի նա ձի,
Նա զառամել է աքսորում
Ցեվ կազակները բոցարյուն
Ել Պալեյի աղաղակից
Ամեն կողմից չեն հավաքվի։
Բայց ՝ՐՐ աչքերը փայլեցին
Ու զայրույթի գիշեր մթին
Ծածկեց նըրա ճակատը ծեր։

Ի՞նչը նըրան, արդ, կըհուզեր։
Գուցե տեսավ ռազմի բոցում
Նա Մազեպին իր թշնամի,
Ցեվ իր տարիքն է անիծում
Այդ զինազուրկը ծերունի։

Մազեպը խոհերում սուզված՝
Մարտն եր դիտում՝ շրջապատված
Խըռոլարար կազակների,
Ավագների, սերդյուկների
Ու հարազատների խմբով։
Կրակոց պայթեց հանկարծակի,
Ու յետ դարձավ Մազեպը ծեր։
Վայնարովսկու ձեռքի մեջ դեռ
Ծըխում եր փողը մուսկետի։
Մի քիչ այն կողմ ընկած գետին
Ջահել կազակն եր արյան մեջ,
Իսկ ձին, փոշոտ ու փրփըրած,
Վայրաթրթինջ, հեռուն սուրաց
Կըրակների միջով անշեջ։
Գալիս եր Մազեպի վըրա
Կազակը՝ սուրը մերկ ձեռքում,
Աչքերում խենթ կատաղություն։

Ծերուկը մոտ քշեց նրան,
Հարցեր տրվեց։ Սակայն կազակն
Արդեն փրչում եր շունչը տաք։
Մարվող տեսքով սպառնում եր դեռ
Նա Ռուսիայի նենգ թշնամուն.
Մրռայլ եր դեմքը մահամուժ
Եվ Մարիի անունն անուշ
Հաղիվ եր թոթովում լեզուն։
Բայց մոտ է ժամը հաղթության,
Ուռա, շվեդները նեղն ընկան
Ո՞, վեհ վայրկյան, ո՞, վեհ պատկեր,
Կրկին հարված մի անվեհեր—
Արդեն փախչում է թշնամին. [32]
Եվ յետևից—մեր այրուձին։
Թրերն են ջարդելով ծռվում։
Դաշտում դիերը փռվեցին,
Ինչպես մորեխն է սև փռվում։

Նստած է Պյոտրը խնճույքի։
Հրպարտ է, պարզ է և փառքով
Լիքն է հայացքն իր անսասան։
Եվ գեղեցիկ է, հոգեթով
Նրա խընճույքն արքայական։

Նա իր զորքի կանչերի տակ
Հյուրասիրում է մեծարար
Եվ զորավարներին իր հին,
Եվ զորավարներին ոտար,
Գրգվում է վեհ գերիներին
Ու բարձրացնում թասեր փրփրած
Իր մեծ վարպետների կենաց։

Բայց ո՞ւր է հյուրը առաջին
Եվ ուսուցիչն ահեղ մեր այն,
Վորի հանդգնությունը հին
Փշրեց հաղթողը Պոլտավյան։
Եվ ո՞ւր է նա, Մազեպը նենգ,
Ո՞ւր է փախել Հուդան, չկա։
Ե՞ր չե արքան հյուրերի մեջ
Ու դավաճանը կոճղի վրա։ [33]

Սուրում է մերկ ստեպներով
Կառլոսի հետ Մազեպը ծեր։
Փախչում են։ Նույն ճակատագրով
Նրանք իրար են միացել։
Մոտիկ վրտանգ, կատաղություն
Արքային ույժ են ներշնչում։
Նա ծանրը վերքն իր մոռացավ։
Գլուխը կախ սուրում է ձիգ

Նա՝ հալածված ռուս բանակից,
Հավատարիմ նրա մարդիկ
Հազիվ հասնում են յետևից։

Հառած հայացքը վորպես նետ
Ստեպի անծայր հեռուներին՝
Ծերուկ Մա՝եպը նըրա հետ
Ասպանդակու՝ ե շտապ իր ձին
Դեմից մի ագարակ եր... ինչ,
Մաղեպը մի՞թե վախեցավ։
Ինչու՞ արագ նա սլացավ
Ագարակի մոտից հեռուն։
Գուցե այդ բակը և այդ տունն
Ու այդ այգին ամայացած
Ցեվ դուռը բաց խոպան դաշտում
Նըրան ինչ վոր վաղուց անցած
Մի պատմությո՞ւն են հիշեցնում։
Դահիճըդ սուրը անմեղության,
Ճանաչեցի՞ր պատկերն այս տան,
Այս տան, յերբեմըն մեծանուն,
Ուր դու սիրով, գինով հարբած,
Յերջանկությամբ շրջապատված,
Ուրախ կատակ եյիր անում։

Ճանաչեցի՞ր սուրը ոթեանն,
Ուր այն հրեշտակն եր անբասիր,
Այգին, յերբ մութ գիշերում այն
Դու ստեպ տարար... ճանաչեցի՞ր։

Գիշերն ստեպն ահա ստվերեց։
Կապուտաջուր Դնեպրի ափին,
Խավարաշուք ժայռերի մեջ,
Սթափ հանձնըվել են մըրափին
Թշնամիները Պետրոսի։
Խաղաղ հանգիստը հերոսի
Զեն խանգարում խոհերը։ Նա
Պոլտավյան ջարդը մոռացավ։
Սակայն շըփոթ ե, չարաղավ
Մաղեպի քունը։ Անխընա՝
Տանջում ե նրան մըռայլ հոգին,
Հանկարծ խավար լըռության մեջ
Նըրան կանչում են։ Նա զարթնեց։
Նայում ե։ Մատը թափ տալով
Մեկը հակվել ե իր վըրա։
Ցնցվեց, կարծես կացնի ահով...
Մաղեպի դեմ, մազերը բաց,
Փայլուն աչքերը ներս ընկած,

Նա՝ հալածված ռուս բանակից,
Հավատարիմ նրա մարդիկ
Հազիվ հասնում են յետևից։

Հառած հայացքը վորպես նետ
Ստեպի անծայր հեռուներին՝
Ծերուկ Մա՝եպը նրբա հետ
Ասպանդակու ե շտապ իր ձին
Դեմից մի ագարակ եր... ինչ,
Մազեպը մի՞թե վախեցավ։
Ինչու՞ արագ նա սլացավ
Ագարակի մոտից հեռուն։
Գուցե այդ բակը և այդ տունն
Ու այդ այգին ամայացած
Ցեվ դուռը բաց խոպան դաշտում
Նրբան ինչ վոր վաղուց անցած
Մի պատմությո՞ւն են հիշեցնում։
Դահիճը դուրը անմեղության,
Ճանաչեցի՞ր պատկերն այս տան,
Այս տան, յերբեմըն մեծանուն,
Ուր դու սիրով, գինով հարբած,
Յերջանկությամբ շրջապատված,
Ուրախ կատակ եյիր անում։

Ճանաչեցի՞ր սուրբ ոթևանն,
Ուր այն հրեշտակն եր անբասիր,
Այգին, յերբ մութ գիշերում այն
Դու ստեպ տարար... ճանաչեցի՞ր։

Գիշերն ստեպն ահա ստվերեց։
Կապուտաջուր Դնեպրի ափին,
Խավարաշուք ժայռերի մեջ,
Սթափ հանձնվել են մըրափին
Թշնամիները Պետրոսի։
Խաղաղ հանգիստը հերոսի
Չեն խանգարում խոհերը։ Նա
Պոլտավյան ջարդը մոռացավ։
Սակայն շրփոթ ե, չարաղավ
Մազեպի քունը։ Անխընա
Տանջում ե նրան մըռայլ հոգին։
Հանկարծ խավար լըռության մեջ
Նրբան կանչում են։ Նա զարթնեց։
Նայում ե։ Մատը թափ տալով
Մեկը հակվել ե իր վըրա։
Ցնցվեց, կարծես կացնի ահով...
Մազեպի դեմ, մազերը բաց,
Փայլուն աչքերը ներս ընկած,

Քուրձերի մեջ, նիհար, գունատ,
Լուսնի լույսով կանգնած է նա...
«Գո՞ւցե յերազ է... դո՞ւ... Մարի՞»։

ՄԱՐԻԱ

Ա՜խ, լ՛ուռ կաց, լուռ, հոգիս, հենց նոր
Փակվեց աչքերն իմ հորն ու մոր...
Կաց... կլսեն մեզ—մի անի։

ՄԱՋԵՊ

Մարի, ուշքի յեկ, խեղճ աղջիկ,
Ասված իմ... Ումն եմ տեսնում, ում։

ՄԱՐԻԱ

Լսիր. ի՜նչ խորամանկ մ արդիկ
Ծիծաղելի բան են պատմում։
Իբրև գաղտնիք, նա ինձ պատմեց.
Թե մահացել է հայրըս խեղճ.
Յեվ ցույց տվավ նա ինձ կամաց
Ճերմակ գլուխը—տեր աստված,
Բամբասանքից էլ ուր փախչել,

Այդ գլուխը, լսում ես ինձ,
Իսկի մարդու գլուխ էլ չեր,
Գայլի գլուխ եր, ա՛յ թե ինչ։
Ինչով եր ինձ խափում այդպես.
Տանջում առանց ամաչելու։
Յեվ ի՞նչ նրպատակով, վոր յես
Զրփախչելի՜ քեզ հետ։ Ինչո՞ւ։
Լսում եր խոր վըշտով նըրան
Իր սիրեկանը ծեր, դաժան։
Բայց մտքերի փոթորկի մեջ
Խոսում եր նա. «Համենայն դեպս՝
Հիշում եմ դաշտը... տոնը մեծ...
Ամբոխ... յերկու մեռած մարմին...
Յեվ մայրըս ինձ տարավ հանդես...
Ո՞ւր եյիր դու... Քեզնից բաժան
Ի՞նչ եմ զրջում յես կես գիշեր։
Տուն գընանք։ Մութ է, անագան։
Տեսնում եմ, ա՜խ, գլուխս դեռ
Դատարկ հուզումներով է լի.
Յես քեզ ուրիշի տեղ դրի,
Ծերուկ։ Ինձ թող։ Հայացքդ նենգ
Ու ծաղրական է, ահազդիկ։
Հոպիտ ես դու։ Նա՝ գեղեցիկ.

Նրա աչքերում փայլում է սեր,
Նրբա խոսքերը մեղմ են, տաք,
Բեխեր ունի ձյունից ճերմակ,
Քոնին՝ արյունն է չորացել»։

Յեվ ծիծաղեց վայրի ճիչով,
Յեվ դեռատի վիթից թեթև,
Թըռավ, փախավ թռչկոտելով
Ու չըքացավ դիշերում սև։

Հալվում եր մութը։ Այգն եր ալ։
Բոցն սկսել եր թեժանալ։
Կաղակն եր այդ ցորեն խաշում.
Դնեպրի ափին թիկնապահներն
Արդեն ձիերն են լողացնում։
Կառլը զարթնեց. «Ոհ, ժամ է, վեր,
Զարթնիր, Մազեպա։ Լուսացավ։
Սակայն վաղուց է նա արթուն,
Նրբան ուտում են վիշտ ու ցավ,
Շունչը խեղդված է կոկորդում։
Յեվ նա թամբում է լուռ իր ձին,
Սուրում փախչող արքայի հետ։
Նրբա աչքերը փայլեցին
Զարհուրելի բոցով, յերբ նա

Տըվավ հրաժեշտն իրա վերջին
Իր հայրենի յեզերքներին։

Անցավ մի դար — և ի՞նչ մընաց
Հըզոր, հրպարտ այդ այրերից,
Կամքով լեցուն այդ կրքերից։
Նրբանց սերունդն անցավ անդարձ —
Նաև հետքերն անհետացան
Արնոտ գործի ու հաղթության։
Յեվ հյուսիսի պետության մեջ,
Նրբա բախտի մեջ մարտական,
Բարձրացըրիր արձանըդ մեծ
Լոկ դու, հերոսըդ Պոլտավյան։
Յեվ այն յերկրում, ուր թեավոր
Շարքերը հողմաղացների
Խաղաղ պատով են պաշարում
Խոպան պատնեշը Բենդերի,
Ուր գոմեշներն են թափառում
Այն ռազմական թմբերի շուրջ —
Ավերակները տրտմաշունչ
Մի խորտակված տաղավարի,
Յերեք մամռոտ աստիճաններ
Հողում թաղված, պատմում են դեռ

Համբավը շվեդ թագավորի։
Ուր յետ մղեց հերոսն այն խենթ,
Իր տընային ծառաների
Ամբոխի մեջ ինքը մենակ,
Հուժկու գլրոհը թուրքերի,
Ու նետեց թուրը բունչուկի տակ։
Յեկվորն այնտեղ զուր պիտ հիմի
Փնտռի դամբանը գետմանի—
Նա չի հիշվում վաղուց ի վեր,
Միայն սրբոց հանդեսներում
Նըրան նըզովք են վորոտում
Տաճարներից—ռարին մի հեղ։
Բայց այն դամբանը կա, վորտեղ
Ննջում են աճյունները սառն
Յերկու անմեղ նահատակի։
Պատսպարեց նըրանց հոգին
Յեկեղեցին սիրողաբար [34]
Շիրիմների շարքում արդար։
Դիկանկայում ծաղկում ե հին
Կաղնիների շարքը հսկա,
Բարեկամի ձեռքով տընկած,
Նըրանք պատմում են թոռներին
Նահատակված նախորդների

Մասին։ Բայց դուստրը հանցավոր...
Ավանդությունը իր մասին
Լըռում ե։ Իր տառապագին
Վիճակը, վերջը ահավոր
Վարագուրված են մեզանից
Թանձր մութով։ Մեկ-մեկ միայն
Աշուղը կույր ուկրայնական
Յերը գյուղական համայնքի մեջ
Գետմանի յերգն ե ծլնկում,
Այդ մեղապարտ աղջկա մասին
Հարևանցի խոսք ե նետում
Կաղակ ջահել աղջիկներին։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Վասիլի Լեոնտյեվիչ Կոչուբեյ, գլխավոր դատավոր, այժմյան կոմսերի նախնիքներից մեկը։

2 Хутор (ագարակ) — քաղաքամերձ տուն։

3 Կոչուբեյն ուներ մի քանի աղջիկ. նրանցից մեկն ամուսնացած էր Մազեպայի քեռորդի Ոբիդովսկու հետ։ Նա, վորի մասին այստեղ հիշատակվում է, կոչվում էր Մատրյոնա։

4 Մազեպան իրոք ուզել էր իր սանուհուն, բայց մերժում ստացել։

5 Ավանդությունը Մազեպային է վերագրում մի քանի յերգեր, վորոնք մինչև այժմ մնացել են ժողովրդի հիշողության մեջ։ Կոչուբեյն իր ամբաստանագրի մեջ նույնպես հիշատակում է հայրենասիրական մի տաղերգություն (դումա), վոր իբր թե հորինել էր Մազեպան։ Այդ տաղը նշանավոր է վոչ միայն պատմական տեսակետից։

6 Բունչուկ և բուլավա (դրոշակ և դուրչ)—դեմանական աստիճանի նշաններ են։

7 Տես Բայրոնի Մազեպան։

8 Դորոշենկո, հին Մալոռոսիայի հերոսներից մեկը ռուսական տիրապետության անհաշտ թշնամիներ։

9 Գրիգորի Սամոյլովիչ, Պետրոս I-ի թագավորության սկզբում Սիբիր աքսորված գետմանի վորդին։

10 Սիմոն Գալեց, խվոստովյան գնդապետ, քաջ ձիավոր. ինքնագլուխ ասպատակությունների համար աքսորված եր Ցենիսեյսկ՝ Մազեպայի գանգատով։ Ցերբ վերջինս դավաճան դուրս յեկավ, ապա Գալեցը նույնպես, իբրև նրա վաղուցվա թշնամին, հետ կանչվեց աքսորից և ներկա գտնվեց Պոլտավայի ճակատամարտում։

11 Կոստյա Գորդեյենկո, զապորոժյան կոզակների բանակապետ (кошевой) ատաման։ Հետագայում անձնատուր յեղավ Կարլ XII-ին։ Գերի վերցվեց և գլխատվեց 1708 թ.։

12 20,000 կազակներ ուղարկվել եյին Լիֆլանդիա։

13 Մազեպան մի նամակում կշտամբում է Կոչուբեյին այն բանի համար, վոր նրան կառավարում է իր կինը, ցպwrs և բարձրամիտ։

14 Իսկրա, պոլտավյան գնդապետ, Կոչուբեյի ընկերը, նրա համախոհը և բախտակիցը։

15 Ցեզուիտ (ճիզվիտ) Զալենսկի, իշխանուհի Դուլսկայա և ինչ վոր բուլղարացի արքեպիսկոպոս, իր հայրենիքից աքսորված, Մազեպայի դավաճանության գլխավոր գործակալներն եյին։ Վերջինս մուրացկանի կերպարանքով յերթևեկում եր Լեհաստանից Ուկրաինա։

16 Այսպես եյին կոչվում գետմանների հրովարտակները։

17 Ֆիլիպ Որլիկ, գլխավոր գրագիր, Մազեպայի մտերիմ խորհրդականը, վերջինիս մահից հետո (1710) Կարլ XII-ից ստացավ մալոռոսական գետմանի դատարկ տիտղոսը։ Հետագայում ընդունեց մահմեդական հավատը և մեռավ Բինդերում մոտ 1736 թվին։

18 Բուլավին, Դոնի կազակ, վորն ըմբոստացել եր մոտավորապես այդ ժամանակ։

19 Գաղտնի քարտուղար Շաֆիրով և կոմս Գոլովկին, Մազեպայի բարեկամներն ու հովանավորները. նրանց վրա պետք է ընկնի, ըստ արդարության, ամբաստանողների դատի և մահապատժի սարսափը։

20 1705 թվին։ Տես. Բ. Կամենսկու Մալոռոսիայի պատմության ծանոթությունները։

21 Ղրիմի վրա կատարված անհաջող արշավանքի ժամանակ, Կազի-Գիրեյը առաջարկեց նրան միանալ իրեն և միասեղ հարձակվել ռուսական զորքի վրա։

22 Իր նամակներում նա գանգատվում եր, թե ամբաստանողներին խիստ թեթև են տանջել և անդադար պահանջում եր նրանց մահապատիժը, համեմատում եր իրեն Սուսաննայի հետ, վորին անմեղ տեղ զրպարտել եյին անորեն ծերունիները, իսկ կոմս Գոլովկինին՝ Դանիել մարգարեյի հետ։

23 Կոչուբեյի գյուղը։

24 Արդեն մահվան դատապարտված Կոչուբեյը տանջանքի յեր յենթարկվել գետմանի զորամասում։ Թշվառի պատասխանները յերևում է, վոր նրան հարցաքննել են իր թագցրած գանձի մասին։

25 Գետմանական զորքը (сердюки) պահվում էր գետմանների սեփական ծախքով։

26 Իր սովորական արագությամբ և յեռանդով Պետրոսի ձեռք առած ուժեղ միջոցները Ուկրաինային պահեցին հնազանդության մեջ։

« 1708 թ. նոյեմբերի 7-ին, Թագավորի Հրովարտակով, կազակներն իրենց սովորության հաստաձայն ազատ ձայներով գետման ընտրեցին· ստարոդուբյան գնդապետ Իվ. Սկորոպադսկուն։

« Ամսի 8-ին Գլուխով յեկան Կիեվի, Զերնիգովի և Պերեյասլավի արքեպիսկոպոսները։

« Իսկ 9-ին նույն ավագերեցները հրապարակով, նզովեցին Մազեպային, միևնույն որը այդ դավաճան Մազեպայի պերսոնը (խրտվիլակը) դուրս բերին և հանեցին ասպետական նշանը (վորը հագցրած էր այդ խրտվիլակի վրա ժապավենով) հիշյալ պերսոնը նետեցին դահճի ձեռքը, դահիճը վերցնելով այն և կապելով պարանից, քաշ տվեց փողոցով և հրապարակով՝ նույնիսկ մինչև կախաղանը և հետո կախեցին։

« Գլուխովում իսկ ամսի 10-ին մահապատժի յենթարկեցին Զեչելին և մյուս դավաճաններին...» (Պետրոս Մեծի որագիրը)։

27 մալոռոսական բառ (каш) - դահիճ։

28 Զեչելը կայազորին պաշտպանեց Բատուրինին իշխան Մենշիկովի զորքերի դեմ։

29 Դրեզդեն՝ Ավգուստ թագավորի մոտ. Տես Voltaire Hist. de Charles XII.

30 — Ա՜հ, ձերդ մեծություն, ռումբ... — «Ի՞նչ ընդհանուր բան կա ռումբի և նամակի միջև, վոր քեզ թելադրում եմ, գրիր»։ Այդ պատահել է ավելի հետո։

31 Գիշերով Կարլը անձամբ մեր բանակատեղը դիտելիս, հանկարծակի հանդիպեց կրակի շուրջը նըստած կազակների։ Նա ձին քշեց ուղիղ նրանց մոտ և կրակելով նրանցից մեկին սեփական ձեռքով ըսպանեց։ Կազակները յերեք անգամ կրակ բաց արին նրա վրա և վոտքից խիստ վիրավորեցին։

32 Իշխ. Մենշիկովի հիանալի կարգադրությունների և գործողությունների շնորհիվ ճակատամարտի բախտը վորոշվում էր նախապես։ Կռիվը տևեց հազիվ յերկու ժամ։ Վորովհետև (ասված է Պետրոս Մեծի որագրում) անպարտելի պարոն ծվեդները ուստով իրենց կռնակը ցույց տվին, յեվ մեր զորքերից բռնամու վողջ բանակը ջախջախվեց։ Պետրոսը հետագայում շատ բան ներեց Դանիլիչին [1] այն ծառայությունների համար, վոր մատուցել էր այդ որը գեներալ իշխ. Մենշիկովը։

33 L' Empereur Moscovite pénè re d' une joie qu'il ne se mettait pas en peine de dissimuler (կայլին և ուրախանալու պատճառները) recevait sur le champ de bataille les prisonniers qu'on lui amenait en foule et demandait á tout.. moment: oú est donc mon frère Charles?

. . . . . .

. . . Alors prenant un verre de vin: A la santé,

1. < Մենշիկովի հայրանուն >.

dit—il, de mes maîtres dans l'art de la guerre!— Renschild lui demanda: qui etaient ceux qu'il honorait d'un si beau titre. «Vous, Messieurs les qènéraux Suedois», reprit le Czar.—Votre Majesté est donc bien ingrate, reprit le Comte, d'avoir tant maltraitè ses maitres.[1]

34 Իսկրայի և Կոչուբեյի գլխատված մարմինները հանձնվեցին ազգականներին և թաղվեցին Կիևի վանքում. նրանց գերեզմանի վրա քանդակված է հետևյալ տապանագիրը.

«Ո՛վ անցորդ, վոր չգիտես, թե ում ճակատն է այստեղ թաղված, քանի վոր տանջանքն ու մահը հարկադրել են մեզ լուռ մնալ, այս քարը լեզու կառնի և կհայտնի քեզ. և հանուն ճշմարտության և հավատարմության առ մեր միապետը ըմպեցինք,

1 <Մոսկովյան կայսրը, լցված մի ուրախությամբ վոր նա չեր ջանում թաղցնել, ռազմադաշտի վրա ընդունում եր գերիներին, վորոնց խմբովին բերում եյին նրա մոտ, և ամեն րոպե հարցնում եր. «իսկ ո՞ւր է իմ յեղբայր Կարլը» . . . . . .
. . . . Այն ժամանակ բարձրացնելով գինու բաժակը, նա ասաց. «Ռազմական արվեստի մեջ իմ ուսուցիչների կենացը»։ Ռենշիլդը հարցրեց նրան. այդ գեղեցիկ տիտղոսով ո՞ւմն է նա մեծարում։ «Ձեզ, պարոն շվեդացի գեներալներ»—պատասխանեց ցարը։ —Ուրեմն, ասաց կոմսը, ձերդ մեծությունը շատ յերախտամոռ է իր ուսուցիչների հետ այդքան վատ վարվելու համար»>։

ար չարանաց և մահու բաժակը, Մազեպայի չարագործությամբ, մենք հավետ արդար, կացնով գլխատված, հանգչում ենք սույն այս վայրում Տիրամոր, վորը պարգևում է իր ծառաներին կյանք հավիտենական։

1708 թվականի հուլիս ամսի 15-ին, զորաց բանակատեղում, Բելայա ցերկովից այն կողմը՝ Բորշչագովեցում և Կովշեվոյում, գլխատվեցին՝ ազնվատոհմ Վասիլի Կոչուբեյը, գլխավոր դատավոր։ Իոանն Իսկրան, Պոլտավյան գնդապետ։ Իսկ նրանց մարմինները հուլիսի 17-ին բերվեցին Կիև և նույն որը Սրբուհի Պեչերսկայայի սենատանում թաղվեցին սույն այս վայրում»։

«Պոլտավա» պոեմը գրված է 1828 թ. հոկտեմբերին կարճ ժամանակում։ Պոեմի առաջին հրատարակությունն (1829 թ.) ուներ հետևյալ առաջաբանը.

«Պոլտավայի ճակատամարտը Պետրոս Մեծի թագավորության ամենից կարևոր և ամենից բարեբախտ իրադարձություններից մեկն է։ Նա ազատեց նրան ամենավտանգավոր թշնամուց. ամրապնդեց ռուսական տիրապետությունը հարավում. ապահովեց նոր հիմնարկությունները հյուսիսում, և պետությանն ապացուցեց ցարի կատարած բարեփոխության հաջողությունն ու անհրաժեշտությունը։

Շվեդական թագավորի սխալն առածի կարգ է անցել։ Նրան մեղադրում են անզգուշության համար։ Ուկրաինայի վրա նրա կատարած արշավանքը հա-

մարում են անխելքություն։ Քննադատներին չես գոհացնի, մանավանդ ձախողությունից հետո։ Սակայն և այնպես Կարլը այդ արշավանքով խուսափեց Նապոլեոնի փառավոր սխալից. նա չքայլեց Մոսկվայի վրա։ Ցեվ կարող եր արդյոք նա սպասել, վոր միշտ անհանգիստ Մալոռոսիան չի վոգեվորվի իր դեմանի որինակով և չի ըմբոստանա Պետրոսի քիչ առաջվա տիրապետության դեմ, վոր Լեվեն Հաուպտը յերեք որ իրար վրա կջախջախվի, վոր վերջապես 25 հ. շվեդներ, իրենց թագավորի առաջնորդությամբ, կփախչեն նարվայի փախստականների առաջ։ Պետրոսն ինքն յերկար տատանվում եր, խուսափելով դլխավոր մարտից՝ վորպես չափազանց վտանգավոր գործիչ։ Այս արշավանքում Կարլ XII-ը ավելի պակաս քան յերբևե վստահում եր իր բախտին. սա տեղի տվեց Պետրոսի հանճարին։

Մազեպան այդ դարաշրջանի ամենանշանավոր դեմքերից մեկն է։ Գրողներից վոմանք ուզեցին դարձնել նրան ազատության հերոս, նոր Բոգդան Խմելնիցկի։ Պատմությունը նրան ներկայացնում է նենգությունների և չարագործությունների մեջ յեփված փառասեր, իր բարերար Սամոյլովիչի զրպարտիչը, իր անբախտ սիրուհու հոր կորստյան պատճառը, Պետրոսի դավաճանը նրա հաղթանակից առաջ, Կարլի դավաճանը նրա պարտությունից հետո։ Յեկեղեցու կողմից նզովված նրա հիշատակը չեր կարող խուսափել և մարդկության անեծքից։

Մեկը ռոմանտիկական վեպերում Մազեպային

պատկերել է վորպես վախկոտ ծերունի, վորը գունատվում է զինված կնոջ դիմաց, հնարում է նրբացած արհավիրքներ, վորոնք պիտանի յեն ֆրանսիական մելոդրամայում, և այլն։ Ավելի լավ կլիներ զարգացնել և բացատրել խորվարար դեմանի խիկական խարակտերը, առանց քմահաճորեն աղավաղելու պատմական դեմքը։

1829 թ. հունվարի 31.»

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ՀՍՍ ԵՎՈՒՐԵՎԱ
ZUUՈ-Арм ССР
Ա. ԻՄ. Ա
ՍՍԱՍՆԻՍՅԱՆ ԱՆՎԱՆ

Թարգմանեց՝ Նայիբի Զաբյան
Գատ. խմբագիր՝ Հ. Գյուլիքևխյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլավլիտ լիտակ Է— 1494

Հրատ. 3995, գլավ. լիտ. պատվեր 172, տիրաժ 3000

Հանձնված է արտադր. 27 հունվարի, 1937 թ.
Ստորագրված է տպագրության 10 փետրվարի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Ցերևան, II Կնունյանցի, 4

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

	Եջ	Տող	Տպված է	Պետք է լինի
✓	9	2 ներքև.	տունս	տունն
✓	15	5 վերև.	շողն	հողն
✓	31	6 ներքև.	Տերության	Ծերության
	41	2-րդ տողը կարդալ վերևից 17-րդ տողի տակ		
✓	48	1 ներքև.	դողդոջում	դողդողում
✓	49	7 »	Գաղանի	Գազանի
✓	49	5 »	եր	իր
✓	49	1 »	գիով	գինով
✓	55	8 »	վորոտալիր	վորոտալից
✓	76	8. վերևից	ադար կ եր	ադարակ եր

«Ազգային գրադարան»
NL0303954

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲԼԻ
ՄԱՍԻՆ 1 ՌՈՒԲԼԻ